

**ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՆԱՅԻՆ
ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ**

Մաս երկրորդ: Արեգակի խավարում, ծովի ալեկոծում*

Բանալի բառեր – վիմագիր, Արեգակի և Լուսնի խավարում, Անանիա Շիրակացի, Կոշի որմնափակ խաչքար, Առաքելոց վանք, Աշտարակի «Ծակ խաչ», ծովի ալեկոծում, նավաբեկություն, ջրահեղձում:

Մուտք

Հայերեն վիմագրերում տարերային աղետներին ու երկնային երևույթներին նվիրված սույն ուսումնասիրությունը¹ մեր նախորդ՝ երկրաշարժերի վիմագիր հիշատակություններն ամբողջացնող հրապարակման ուղղակի շարունակությունն է²:

Ներկա հետազոտությամբ փորձելու ենք ներկայացնել վիմագիր սկզբնաղբյուրներում վկայված այնպիսի երևույթներ, ինչպիսիք են Արեգակի խավարումն ու ծովի ալեկոծումը, հաջորդիվ՝ նաև երաշտն ու արտերին պատուհասած մորելիսի «գրոհը»՝ իրենց հետևանքային դրսևորումներով: Անշուշտ, մատենագրության ու ժողովրդական ավանդության մեջ նման երևույթների մասին հիշատակություններն անհամեմատ ավելի շատ են ու բազմաբնույթ, իսկ հուշարձանների, մասնավորապես՝ խաչքարերի ու տապանաքարերի վիմագրերում, կարելի է ասել, այդօրինակ վկայությունների

* Հոդվածն ընդունվել է տպագրության 29.04.2022:

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH-005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

2 Տե՛ս **Հարությունյան Ա.**, Տարերային աղետներն ու երկնային երևույթները վիմագրերում: Մաս առաջին: Երկրաշարժ, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2022, N 1, էջ 178-196:

միայն առանձին դրվագներ են պահպանվել, որոնք ի մի բերելն ու համապարփակ քննելը խիստ արդիական է:

Վիմագրերում ավանդված հարուստ բառաֆոնդը՝ հատուկ առուններ, կոչումներ, պաշտոններ, դրամական միավորներ, չափեր ու կշիռներ, հարկային տերմիններ և այլն, տարբեր առիթներով շրջանառվել է մասնագիտական գրականության մեջ: Դրանց մի սովոր մասը լեզվաբան, վիմագրագետ Սուրեն Ավագյանն առանձին ուսումնասիրությունների³ և նույնիսկ մենագրության նյութ է դարձրել⁴: Այդուհանդերձ, անելիքները տակավին շատ են, ուստի հայագիտության համար նույնքան կարևոր են նաև խնդրո առարկա երևույթներն արտացոլող վիմագրական էջերի վերհանումն ու հանրայնացումը, ինչին էլ միտված է սույն հոդվածաշարը:

Ա. Արեգակի խավարում

Տիեզերական այս երևույթի մասին վաղագույն հիշատակությունը թերևս Սուրբ Գրքում Քրիստոսի խաչելության ժամանակ տեղի ունեցած Արեգակի խավարման նկարագրությունն է. «Եւ համարեայ կէսօր էր եւ խաւար եղաւ ամբողջ երկրի վրայ մինչեւ ժամը երեքը. Արեգակը խաւարեց» (Ղուկ. ԻԳ. 44, նաև՝ Մատթ. ԻԷ. 45, Մարկ. ԺԵ. 33), ինչպես նաև Երկրորդ գալստյան ժամանակ սպասվող երկնային հրաշագործության տեսարանը, երբ «արեգակը պիտի խաւարի, եւ լուսինն իր լոյսը չպիտի տայ, եւ աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի զօրութիւններ պիտի շարժուեն» (Մատթ. ԻԴ. 29, նաև՝ Մարկ. ԺԳ. 24-25, Ղուկ. ԻԱ. 25-26)⁵:

Հայ մատենագրության մեջ, ի մասնավորի՝ տիեզերագիտական ու տոմարագիտական ձեռագիր մատյաններում, բազմաթիվ բնագրեր ու մեկնություններ են պահպանվել, որոնցում չի շրջանց-

3 Տե՛ս Ավագյան Ս., Վիմագրական պրպտումներ, Եր., 1986:

4 Տե՛ս Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978:

5 Թե՛ն վերջին դեպքում խավարման բուն պատճառը երևացող խաչի արձակած գերիզոր ճառագայթներն են, քանզի «...Երեւիս (խաչը – Ա. Հ.) արկիահրաշ ճառագայթիւք յարեւելից ընդ ամպս երկնից եւ յաղթես արեգակնային ճառագայթիցն...» (Չաքարիա կղզ. Չագեցի. Ճառք, աշխատասիրութեամբ Հ. Պողոս վրդ. Անանեանի, Վենետիկ, 1995, էջ 501-502), և միայն Քրիստոսի խաչելության ժամանակ է, որ Արեգակի խավարում է տեղի ունեցել. «Արեգակն ոչ հանդուրժեալ չարչարանաց արարչին իւրոյ զոսկեճաճանչ ճառագայթսն իւր մթացուցանէր: Եւ լուսինն քողատուգեալ ծածկէր գպատրուակն. եւ իրճուալիւր բազմութիւն պարբ աստեղացն անյայտացեալ չքանային» (նույն տեղում, էջ 495, հմմտ. Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառնությունը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 358):

վել նաև երկնային մարմինների՝ Արեգակի, Լուսնի, աստղերի որպիսության, տարեկան շարժման, պարբերաշրջանների տեսության լուսաբանումը: Այսպես, եթե երկրաշարժը, ըստ Անանիա Շիրակացու, «...լինի ի հողմոց բնութենէ...»⁶, ապա «...լուսինն է պատճառ խաւարման արեգական...»⁷, քանզի Լուսինն է, որ «...կացեալ ընդդէմ արեգական արգել ի մէնջ զլոյսն... որպէս արեգակն լուսնի ի թագուցանել զճառագայթս իւր ընդ երկրաւ, որով ծածկեալ ի ստուերէ երկրի՝ լուսին առանց լուսոյ երևի»⁸: Բացի այս՝ Շիրակացու տիեզերագիտական աշխատությունների շարքում հայտնի է նաև «Յաղագս շաղկապութեան Արեգական եւ Լուսնի» խորագրով բնագիրը, որը, ըստ Աշոտ Աբրահամյանի, «...խավարումների վերաբերյալ մեզ հասած ամենահին հայերեն տեքստն է, որ հիմնված է գիտական հաշիվների վրա»⁹: Բնագրում մասնավորապես նշված է. «Իսկ յորժամ կամիս գիտել՝ թէ զիարդ են ընթացք արեգական և լուսնի առ միմեանիս... Կալ գտունսն և երթ ԺԲ ԺԲ. և բաշխեա. ի խոյէն յառաջ թէ գտանես զարեգակն և զլուսին ի միում տան, ի վայր քան զԲԺ-ան ժամս խաւարի արեգակն. և թէ գտանես զարեգակն և զլուսին յայլ և յայլ տան, և բարձրութիւն և խոնարհութիւն նոյն տուն դեպի, խաւարի լուսինն»¹⁰: Այսինքն՝ Արեգակի և Լուսնի փոխադարձ ընթացքը հասկանալու համար կենդանակերպի տները (զոոլիակները) հարկ է բաժանել տասներկուսի՝ սկսելով Խոյից: Եթե Արեգակն ու Լուսինը հայտնվեն միևնույն տան մեջ, ապա տասներկու ժամվա ընթացքում Արեգակը կխավարի, իսկ եթե Արեգակն ու Լուսինը տարբեր տներում են, բայց բարձրությամբ ու խոնարհությամբ միևնույն տան մեջ են, ապա Լուսինը կխավարի¹¹:

Ավելի ուշ Վանական վարդապետը «Յաղագս տարեմտին» մեկնության մեջ խավարման երևույթը պայմանավորում է Լուսնի՝ նոր փուլում գտնվելու հանգամանքով, երբ այն հայտնվում է Արեգակի

6 Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 321:

7 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն եւ տոմար, աշխատութեամբ՝ Ա. Աբրահամյանի, Եր., 1940, էջ 58:

8 Նույն տեղում:

9 Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 139: Ա. Աբրահամյանի հաղորդմամբ՝ այս բնագիրն ի սկզբանե ընդօրինակվել է Շիրակացու «Յաղագս չափոյ...» և «Թիւք որչափութեան տանց իին և նոր կտակարանաց» աշխատություններից հետո, ինչի հետևանքով էլ դուրս է մնացել տիեզերագիտական աշխատություններն ամբողջացնող ուսումնասիրությունից: Բնագիրը տես ՄՄ 2180 (538աբ) և ՄՄ 2762 (116բ-7ա) ձեռագրերում:

10 Նույն տեղում, էջ 335:

11 Բնագրի աշխարհաբար փոխադրության համար շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, տոմարագետ Ջուլիետա Էյնաթյանին:

ու Երկրի միջև՝ մեկ ուղիղ գծի վրա, և իր միջամտությամբ մասամբ կամ ամբողջությամբ ստվերում Արեգակի սկավառակը. «Եւ խաւարումն Արեգական, որ բնութեամբ լինի ի նորանալ Լուսինն, զի ընդդէմ անցանէ»¹²: Համանման է նաև Լուսնի խավարումը, երբ Երկիրն է հայտնվում Արեգակի և Լուսնի միջև, ինչի հետևանքով Արեգակից լուսավորվող Երկիրը կոնաձև ստվեր է արձակում, որի մեջ մասամբ կամ ամբողջությամբ ընկղմվում է նաև Լուսինը: Վանական վարդապետն այն մեկնել է երկնային այլ մարմինների օրինակով. «Իսկ խաւարումն Լուսնի այսպէս լինի. Արուսեակն (Վեներան – Ա. Հ.) առաջի Արեգական երթայ, եւ Փայլածուն (Մերկուրին – Ա. Հ.)՝ զկնի, եւ Լուսինն ի մէջ նոցա. թէ այն երկու մոլորակքն յԱրեգական մաւտին՝ Լուսինն խաւարի...»¹³:

Տիեզերագիտական մեկնաբանման փորձերից զատ՝ երկնային լուսատուների խավարման երևույթն արտացոլվել է նաև ժողովրդական հավատալիքներում և ավանդագրույցներում: Այսպես՝ ՄՄ 2180 ձեռագիր ժողովածուի միավորներից մեկը բովանդակում է ոմն իմաստասերի գուշակությունները տարբեր ամիսներին տեղի ունենալիք Արեգակի և Լուսնի խավարման առնչությամբ. «Յունուար, թէ Լուսինն խաւարի՝ վաստակն լաւ լինի, թէ Արեգակն խաւարի՝ կոտորումն լինի անասնոց և գազանաց, և հիւանդութիւն տղայոց... Դեկտեմբեր, թէ Լուսին խաւարի՝ բարի գայ և՛ խաղաղութիւն, և՛ ոչխարաց առատութիւն, թէ Արեգակն խաւարի՝ մահ անկանի...»¹⁴: Համշենցիներն Արեգակի և Լուսնի խավարումը կապում են վիշապի հետ, որը «...աշխատում է նրանց բռնել ու կուլ տալ: Հէնց որ բռնելու է լինում, խաւարում է պատահում: Բայց երկար չի քաշում, լուսատուն նրա ձեռքերից պրծնում, փախչում է»¹⁵: Ըստ մեկ այլ տարբերակի, որն իբր փոխառված է պարսիկներից, երկնային մթագնած զույգ մարմինները, որոնք համարվում են նախնադարյան ցլի զավակներ, պտտվում են Երկրի ուղեծրում ավելի մոտ, քան Արեգակն ու Լուսինը, և երբ վերջիններս հանդիպում են, Երկրում խավարում

12 **Խաչիկյան Լ.**, Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ, «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», հատ. 1, Եր., 1941, էջ 162: Հմմտ. **Էնաթյան Զ.**, Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ (Է-ԺԵ. դարեր), ուսումնասիրություն և բնագրեր, Եր., 2015, էջ 218:

13 Նույն տեղեկում:

14 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Է, խմբագրութեամբ **Գ. Տեր-Վարդանեանի**, Եր., 2012, սյուն 331 (ձեռագրում 309բ-15ա):

15 **Մուրադեանց Զ.**, Համշենցի հայեր. Երկնքի լուսատուներ եւ բնութեան երեւոյթներ, «Ազգագրական հանդէս», գիրք VI, Թիֆլիս, 1900, էջ 114:

է տեղի ունենում¹⁶: Իսկ ստուգաբանական մի ավանդագրույցի համաձայն՝ Արևն աղջիկ է, Լուսինը՝ տղա, միմյանց հանդիպելիս «...Լուսինը խելակորույս է լինում, խավարում է: Նրա վզին մի արյունոտ տիկ կա. Լուսինը երբեմն այդ տիկը գցում է Արևի վիզը, որից նա խավարում է»¹⁷:

Արեգակի խավարման մասին վիճագրերում վկայված մեզ հայտնի վաղագույն հիշատակությունը պահպանվել է Արագածոտն գավառը սելջուկներից ազատագրելու առթիվ 1195 թ. կանգնեցված **Կոշի որմնափակ խաչքարի** պատվանդանի արևմտյան նիստին (նկ. 1): Ըստ վիճագրի՝ Պետրոս վարդապետին, որը մատենագրությունից հայտնի է Ականատես մականվամբ, կոթողը կանգնեցնելուց դեռևս 20 տարի առաջ, այսինքն՝ 1175 թ., «հոգո ակամբք» և արևելքից իջած լուսեղեն ամպում հայտնված խաչի գալստյամբ տեսիլք էր երևացել, իսկ «...մին այդ տարին (հաջորդ տարին (= 1176 թ.) – Ա. Հ.) **խաւարեցաւ Արեգակն.... եւ դրդդեցաւ Երկիր....**»¹⁸: Այսինքն՝ բացի կոթողի կանգնեցման փաստից՝ վիճագրում վկայված են նաև տարիներ առաջ տեղի ունեցած երկնային ու երկրաբանական երևույթները՝ Արեգակի խավարումն ու երկրաշարժը: Հոդվածաշարի նախորդ՝ երկրաշարժերին նվիրված մասում այս վիճագրին անդրադարձել ենք, ուստի այստեղ միայն վկայաբերենք ուսումնասիրողների այն համոզմունքը, որ հիշատակված տեսիլքի իրական հիմքը 1176 թ. ապրիլի 11-ի Արեգակի լրիվ խավարումն է¹⁹, հատկապես որ դա վավերացվում է նաև մատենագրական աղբյուրներով. «ՈՒԵ. (1176), խաւարեցաւ արեգակն»²⁰, կամ ավելի հանգամանակի. «Ի ՈՒԵ. (1176).... ամի խաւարեցաւ արեգակն ի Նոր կիւրակէին, ի մետասանն ապրիլի, յերկրորդ ժամու, մինչ աստեղք երևեցան»²¹:

16 Տե՛ս **Littmann M., Espenak F., Willcox K.**, Totality Eclipses of the Sun, Third Edition, New York, by Oxford University Press, 2008, էջ 42:


17 **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 7, N 3/թ:

18 **Շահինյան Ա.**, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1968, N 2, էջ 198: Տե՛ս նաև **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները. Աղբյուրագիտական քննություն, Եր., 1977, էջ 106, **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 366:

19 Տե՛ս **Մուրադյան Պ.**, նշվ. աշխ., էջ 106, **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 366:

20 Ժամանակագրական մանր հատվածներ. Ղ. Վասն անցեալ աւուրցն, «Մանր ժամանակագրություններ», հատ. I, կազմեց **Հակոբյան Վ.**, Եր., 1951, էջ 391:

21 **Անանուն** ժամանակագրություն. Թագաւորք վերջինք Բագրատունիք, «Մանր ժամանակագրություններ», հատ. II, կազմեց **Հակոբյան Վ.**, Եր., 1956, էջ 502:



Նկ. 1. Կոշի որմնափակ խաչքարը և պատվանդանի արձանագրության գրչապատկերը (լսնկ.՝ Ռաբելե Զանոնեի, 2016 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

Պատահական չէ, որ 1176–1177 թթ. ավատատիրական ապստամբությունը նկարագրելիս դեպքերին ժամանակակից Դավիթ Քոբայրեցին հաղորդում է. «Նախ քան զայս միով ամալ խաւարեցաւ արեգակնն յապրիդիոս ամսուոջ ի նորում կիւրակէին, յառաջնումն ժամու և նշանք յետ այսր ցուցան շփոթման»²²: Արեգակի այս խավարումը վկայված է նաև Ներսես Լամբրոնացու երկում. «...յառատուն պահու ընդ ծագել արեւուն եղև խաւար ի վերայ երկրի, զոր ոչ ոք ի մարդկանէ էր տեսեալ այնպիսի, ոչ որպէս զխաւարումն արեգական, այլ որպէս զհասարակ գիշերի՝ յորժամ իցէ առանց լուսնի եւ աստեղաց, ի յաշխարհէն Պաղեստինացուց մինչև ի Բիզանդիոն եւ յայլ բազում գաւառս»²³, այսինքն՝ Արեգակի լրիվ խավարում է եղել²⁴, որը, ըստ մատենագրի, նմանվել է անլուսին ու

22 Հակոբյան Վ., Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը, «Տեղեկագիր» հաս. գիտ., Եր., 1952, N 8, էջ 119:
 23 «Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Ընդհալոյ», գիրք երկրորդ. Պատճառ խնդրոյ միաբանութեան թագաւորին Հռոմոց Մանուէլի եւ Ներսիսի եւ Գրիգորիսի թուղթքն, զոր գրեցին առ միմեանս, Երուսաղէմ, 1871, էջ 168:
 24 Ուսումնասիրությունները պարզել են, որ Արեգակի լրիվ խավարում առհասարակ հազվադեպ է տեղի ունենում, մոտավորապես 300-400 տարին մեկ, իսկ տարվա ընթացքում դիտելի է խավարման նվազա-

անասող գիշերի՝ ներառելով Իսրայելից մինչև ներկայիս Թուրքիայի արևմտյան շրջանները: Քոբայրեցին հիշյալ խավարման տարեթիվ է սահմանում հայկազյան 627 թ. (= 1178 թ.), Հովհաննես Սարկավազի 94 թ. (= 1178 թ.), մեր թվարկության 1179 թ., հռոմեական 398 թ. (= 1177 թ.)²⁵:

Ճշգրիտ թվականը պարզելու համար պատմաբան Հայրապետ Մարգարյանն առաջարկել է 1179-ից հանել երկու տարի, որը համընկնում է նաև հռոմեական 1177-ին²⁶, իսկ «նախ քան զայս միով ամառ» արտահայտությունն ուղղակիորեն հստակեցնում է Արեգակի խավարման տարին, այն է՝ 1176 թ. (1177-1), որը վկայված է նաև Օպպոլցերի կազմած Արեգակի խավարման աղյուսակում²⁷:

Արեգակի խավարման մասին ժամանակագրորեն հաջորդ հիշատակությունը վկայված է **Առաքելոց վանքի** (ՀՀ Տավուշի մարզ, Կիրանց գյուղից մոտ 3 կմ արևմուտք) հուշարձանախմբից մոտ 200 մ հարավ-արևմուտք գտնվող կիսավեր գույգ եկեղեցիների հարևանությամբ ընկած քանդակազարդ խաչքարի թիկունքի ընդարձակ վիմագրում (նկ. 2): Վերծանության համաձայն՝ կոթողը կանգնեցվել է Մահկանաբերդի իշխանաց իշխան, աթաբեկ Սադունի և հոգևոր առաջնորդ Առաքել վարդապետի օրոք՝ հայոց ՉԺԶ (1267) թ., Աբխուղոմ²⁸ քահանայի կողմից իր ծնողների գերեզմանին, երբ «...ի նոյն ամի **Արեգակն խաւարեցաւ...** եւ ահ կալաւ զամէնէսեան»²⁹: Նախ ասենք, որ վիմագրում վկայված Առաքել վարդապետին Ս. Ավագյանն իրավամբ նույնացրել է Դեղձուտի վանքի համանուն առաջնորդի հետ, որը Կիլիկիայի Տարսոն գավառից եկել և տեղի իշխանավորների հովանավորությամբ ու հոգևոր եղբայրների օժանդակությամբ 1274 թ. ավարտել էր Դեղձուտի նշանավոր վանքի կառու-

գույնը 2, առավելագույնը 5 դեպք (տես «Солнечные затмения и их наблюдения», составили: **Бронштэн В., Бугославская Е., Бугославская Н.** и др., под редакцией **А. Михайлова**, М., 1960, էջ 25-26):

25 Տես **Հակոբյան Վ.**, նշվ. աշխ., էջ 119:

26 Տես **Մարգարյան Հ.**, Հյուսիսային Հայաստանի և Կրաստանի ժԲ. դարի պատմության մի քանի հարցեր, Եր., 1980, էջ 181: Տես նաև **Քոզոյան Ա.**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Եր., 1995, էջ 139:

27 Տես **Քոզոյան Հ.**, Օրացույցի պատմություն, Եր., 1970, էջ 494:

28 Վիմագրի առաջին հրատարակիչ Սուրեն Ավագյանն այս անձնանունը վերապահությամբ կարդացել է **Քիսում** կամ **Աբիսում** նշելով, որ «երկու ձևն էլ թե՛ Քիսում, թե՛ Աբիսում, այլուստ ավանդված չեն...» («Դիվան հայ վիմագրության» (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ VI. Իջևանի շրջան, կազմեցին՝ **Ավագյան Ս., Զանվիդայան Հռ.**, Եր., 1977, էջ 213): Դատելով վիմագրի գրչապատկերից՝ առավել հավանական ենք համարում **Աբխուղոմ** անվան վկայությունը, որում կցագրված են ԱԲ և ՈՂ տառաստեղները:

29 Նույն տեղում, էջ 211, արձ. 34: Հմտ. **Շահինյան Ա.**, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները. IX-XIII դարերի խաչքարերը, Եր., 1984, էջ 60:

ցումը: Այսինքն՝ նախքան Դեղձուտում հաստատվելն ու վանքի առաջնորդությունը ստանձնելը Առաքել վարդապետը գործել է Առաքելոց վանքում և հռչակվել իբրև «մեծ վարդապետ»³⁰, ինչի լավագույն առիավատչյան խնդրո առարկա վիճագրում նրան ձոնված հետևյալ բնութագրականն է. «...որ էր նմանեալ Սր Առաքելոցն, եւ էր Դուռն եւ Արեւելք երկրիս եւ պարծանք եւ բարէխաւս առ Աստուած եւ մարդիկ...»³¹:

Կ Ի Թ Վ Ի Ս Վ Ն Ա Ո Յ : Չ Ձ Ջ : Ի Կ Ի Ն Ո Ւ
Թ Ի Մ Ե Ծ Ի Զ Խ Ա Ա Յ Ի Զ Խ Ն Ի Ն Ս Ա Դ Ո Ւ
Ե Ե Յ Ա Ռ Ա Ջ Լ Ո Դ Ո Թ Ի Մ Ե Ծ Վ Լ Դ Ա Գ Ե
Տ Ի Ն Ա Ռ Ա Ք Ե Մ Ո Ե Բ Ե Լ Ա Ն Ե Լ Մ Ե Ա Ռ Լ Է Լ Ո
Ց Ն Լ Ե Բ Դ Ո Ռ Լ Լ Ա Վ Ե Լ Բ Ե Բ Կ Ի Ս Լ Գ Ե Ծ Է Լ
Բ Լ Ե Ի Ե Ս Ա Ռ Ա Ծ Լ Ա Լ Բ Դ Ի Կ : Ե Լ Ի Ո Յ Ն Լ Ե Լ
Ե Գ Ա Կ Լ Խ Ա Լ Ե Ց Ա Լ Ի Բ Բ Ի Ս Ո Ւ Ե Ի Ց Լ Ա Յ
Լ Ա Ջ Գ Ե Ց Ե Գ Ի Ն Բ Ե Ո Ջ Բ Ի Բ Ա Ջ Ո Մ Տ Ե Գ Ի Ս
Լ Ա Վ Կ Ա Ա Ա Բ Ջ Ա Ե Լ Ե Ս Ե Ն : Ե Յ Ա Յ Ս Մ
Լ Ե Ս Ն Ա Լ Զ Ա Բ Ա Վ Կ Ե Լ Ե Ս Ռ : Մ Կ Ս Ե Կ Ե
Ց Ի Ջ Ի Ա Յ Չ Ի Զ Ա Կ Լ Ս Մ Լ Ե Ծ Ն Ո Գ Ա Յ
Ի Մ Ո Ց Ո Բ Ե Բ Կ Բ Գ Ե Բ Յ Ի Զ Ե Ց Ե Բ . . .
. Ա

Նկ. 2. Առաքելոց վանքի հարևանությամբ գտնվող խաչքարի թիկունքի արձանագրության գրչապատկերը. 7-րդ տողում նշված է Արեգակի խավարման մասին (արտատպված՝ ԴՀՎ, պրակ VI, էջ 212):

Ինչ վերաբերում է Արեգակի խավարման մասին հիշատակությանը, ապա վիճագիրը ծանոթագրելիս Ս. Ավագյանը միայն նշում է, որ «արձանագրությունը կարևոր է նաև նրանով, որ այստեղ ստույգ հայտնվում է ՉԺԶ. թ. (1267) տեղի ունեցած արեգակի խավարման մասին»³² և ոչ ավելին: Օպպոզիցիոնի աղյուսակում 1267 թ. Արեգակի խավարման երկու դեպք է վկայված՝ մայիսի 25-ին և նոյեմբերի 17-ին³³, իսկ մատենագրության մեջ այլ հիշատակություններ գտնել չհաջողվեց:

Արեգակի և Լուսնի խավարման՝ ավետարանական դրվագներն արտացոլող մի ուշագրավ հիշատակություն կա նաև **Աշտարակի՝ «Ծակ խաչ»** անունով հայտնի խաչքար-մահարձանի վիճագրում (նկ. 3): Արձանագիր են կոթողի պատվանդանը, քիվն ու եզրագոտին, ընդ որում, սա այն բացառիկ հուշարձաններից է, որոնցում կարելի է տեսնել վիճագրման մի քանի եղանակ՝ փորա-

30 ԴՀՎ, պրակ VI, էջ 211, արձ. 345: Հմմտ. Մինայան Թ., Առաքել վարդապետը և Դեղձուտի գրչության կենտրոնը, «Բանբեր Մատենադարանի», Եր., 2020, N 29, էջ 301:
31 ԴՀՎ, պրակ VI, էջ 211, արձ. 345:
32 Նույն տեղում, էջ 212:
33 Տե՛ս Բաղայան Հ., նշվ. աշխ., էջ 496:

գիր (պատվանդանին), ծաղկագիր (քիվին) և ելնդագիր (եզրագոտուն): Պատվանդանի արձանագրության համաձայն՝ կոթողը կանգնեցրել է տեր Հուսամը հայոց ՉժԷ (1268) թ.՝ պարոն Սաղունի և նրա զավակների երկար կենդանության, ինչպես նաև իր և իր ծնողների հիշատակի համար. «...ես՝ տէր Յուսամս, կանգնեցի զՍր Նշանս, վասն յերկար կենաց պարոն Սաղունին եւ զաւակաց իւրոց եւ յիշատակ հոգոյ իմո եւ ծնողաց իմո...»³⁴: Վիմագրի նախորդ հրատարակիչներից Գարեգին Հովսեփյանն ու Սուրեն Սաղունյանը տեղին են նկատել, որ արձանագրությունն իր բովանդակությամբ ինքնին աղերսվում է Հաղբատավանքի 1273 թ. «Ամենափրկիչ» խաչքարի արձանագրությանը³⁵, համաձայն որի՝ այն ևս կանգնեցվել է աթաբեկ, ամիրսպասալար, պարոն Սաղունի և իր զավակների արևշատության, ինչպես նաև խաչքարը կանգնեցնող տեր Հովհաննեսի և իր ծնողների հիշատակի համար³⁶:

Սակայն առավել ուշագրավը բուն խաչքարի վիմագիրն է, որը, Ս. Սաղունյանի բնորոշմամբ, առնչվում է «...խաչելության ու դժոխքի կործանման երազանքի հետ, ինչը լրացնում են խավարամած արևի, լուսնի, Ադամի քանդակներն ու դրան հավելվող արձանագրությունը, որն ինքնին հետապնդում է ազատագրության միսիան»³⁷: Խաչքարի կիսաեղծ վիմագիրն ավելի վաղ փորձել է վերծանել Գարեգին Հովսեփյանը, որը թեև չի ամբողջացրել բնագիրը, սակայն իմաստային առումով ձիշտ է ընկալել. «...Անեղն ու Անմահը մարմնանալով և խաչվելով՝ փրկվել են գերված հոգիները (դրունք դժոխոց)»³⁸: Գ. Հովսեփյանի վերծանությունը հաջողել է ավարտուն տեսքի բերել Ս. Սաղունյանը. «Լուսինն խաւար, արեգակն խաւար, Աստուած անեղ, անմահ յաւիտէնից: Արարայր Սուրբ Կուսէն ի մայր, Ադամայ մարմինն առնէ, խաչուած ի խաչին: Ահեղ դատին դրաւնք դժոխոյն բանայ, զառջի տեղին տայ իւր ծնընդաւքն մայր Եվայ»³⁹:

34 Վիմագիրը քանիցս հրատարակվել է (Շահխաթունյանց, Ալիշան, Կոստանյանց և այլք): Առավել ճշգրիտ վերծանությունը տես **Հովսեփյան Գ.**, Հավուց թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հատ. Բ, Եր., 1987, էջ 84-85, **Սաղունյան Ս.**, Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, Եր., 1998, էջ 194, արձ. 87:

35 Տես նույն տեղերում:

36 Տես ԴՀՎ, պրակ IX. Լուռու մարզ, կազմեցին **Բարխուդարյան Ս., Ղաֆադարյան Կ., Սաղունյան Ս.**, Եր., 2012, էջ 180-183, արձ. 334-343:

37 **Սաղունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 196:

38 **Հովսեփյան Գ.**, նշվ. աշխ., էջ 85:

39 **Սաղունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 196: Տես նաև **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 217:



Նկ. 3. Աշտարակի «Ծակ խաչ» հուշարձանը և դրա քանդակազարդ թիվը, 1268 թ. (լսնկ.՝ Ս. Մաթևոսյանի, 2016 թ.)

Անշուշտ, վիճաբրուժ Լուսնի և Արեգակի խավարման հիշատակություններն աղերսվում են ավետարանական հայտնի թեմաների, մասնավորապես՝ Քրիստոսի խաչելության տեսարանի հետ, ուստի պատահական չէ Գ. Հովսեփյանի նկատառումը, ըստ որի՝ «...այստեղ մի սովորական խաչ չէ, որ ունինք, այլ խաչով խաչելության արտահայտություն, որի ապացույցներն են արեգակի և լուսնի դիցաբանական երևույթները, ինչպես և ճակատի մակագրությունը..., կամ շրջանակի եղծված արձանագրությունը...»⁴⁰ :

40 Հովսեփյան Գ., նշվ. աշխ., էջ 85: Տե՛ս նաև ԴՀԿ, պրակ IX, էջ 180:

Թեև քանդակային հորինվածքում տեղ են գտել միայն Արևն ու Լուսինը, սակայն մնացած բաղադրիչների բացակայությունը կարծես լրացնում է բուն վիմագիրը, որի համաձայն՝ դժոխքի ավերումը տեղի է ունենալու Ահեղ դատաստանից առաջ, մի երևույթ, որը, հնագետ, մշակութաբան Համլետ Պետրոսյանի կարծիքով, Քրիստոսի խաչելությունն ու խաչի փրկագործական միջնորդությունն ավելի արդիական կարող է դարձնել⁴¹:

Բ. Ծովի ալեկոծում

Մատենագրության մեջ՝ առավել շատ, իսկ վիմագրերում անհամեմատ սուղ վկայություններ են պահպանվել նաև ծովի ալեկոծման և դրա հետևանքային դրսևորումների, մասնավորապես՝ նավաբեկության ու ջրահեղձման դեպքերի մասին: Հայկազյան բառարանում «ալեկոծութիւն» բառի առաջին բացատրությունն է «կոծումն ավեօք, ծփումն, տատանումն»⁴², իսկ վկայաբերված օրինակներից «զծովային մրրկացն ալեկոծութիւն լուծանել»⁴³ հատվածն ինքնին հուշում է ծովի ու մրրիկների, այսինքն՝ հողմերի և ալեկոծության ուղղակի կապի մասին: Այս երևույթի մասին վաղագույն հիշատակությունները դարձյալ Սուրբ Գրքից են. արարչագործության երրորդ օրն Աստված երկնքի տակ գտնվող ջրերը հավաքեց մի տեղ, որ երևա ցամաքը: Այդպես էլ եղավ. ցամաքը կոչեց երկիր, իսկ «զժողով ջուրսն կոչեաց ծովս» (Ծննդ. Ա. 10): Այն արտացոլվել է նաև առասպելաբանական հնագույն պատկերացումներում, որոնց նախատիպը 5-րդ դարից ավանդված Վահագնի ծննդյան երգն է. «Երկնէր երկին, երկնէր երկիր, երկնէր եւ ծովն ծիրանի...»⁴⁴, այսինքն՝ աշխարհը եռակազմ է՝ բաղկացած երկնքից, երկրից և ծիրանի ծովից⁴⁵:

Մատթեոսի Ավետարանում մանրամասն ներկայացված են Քրիստոսի հրաշագործությունները, ի շարս որոնց՝ փոթորկվող ծովի

41 Տե՛ս **Պետրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 217:

42 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբաօր **հ. Գ. Աւետիքեան, հ. Խ. Սիւրմէլեան, հ. Մ. Ազեղեան**, հատ. Ա-Բ, Վենետիկ, 1836 (վերահրատ. Եր., 1979), էջ 13:

43 Նույն տեղում:

44 **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմութիւն, առաջաբանը՝ **Պ. Մուրադեանի** եւ **Կ. Իզգաշեանի**, քննական բնագիրը՝ **Մ. Արեղեանի** եւ **Ս. Յարութիւնեանի**, «Մատենագիրք Հայոց», հատ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1830 (Ա, գլ. ԼԱ):

45 Տե՛ս **Հարությունյան Ս.**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 9:

խաղաղեցման մասին պատմությունը: Հաղորդվում է, որ Տիրոջ հետ նավակում գտնվող աշակերտները զարմանում են, որ ծովը խաղաղվում է այն բանից հետո, երբ Տերը սաստում է հողմերին ու ծովին. «Եւ իբրև եմուտ ի նաւն, գնացին զկնի Նորա աշակերտքն Նորա և ահա շարժումն մեծ եղև ի ծովուն՝ մինչև նաւին ծածկել յալեաց անտի... Յայնժամ յարուցեալ (Քրիստոսը – Ա. Հ.) սաստեաց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ» (Մատթ. Ը. 23–26, հմմտ.՝ Մարկ. Դ. 35–41, Ղուկ. Ը. 22–25):

Անանիա Շիրակացին ծովերն իբրև սաստիկ հողմերի հետևանք է մեկնում, երբ երկնքի ու երկրի միջև փոթորկվող հողմերը խառնել ու միավորել են երկրային հողն ու երկնային ջուրը, ինչի հետևանքով «...խտանայ երկրային մարմինս ի ներքոյ ջուրցն՝ և լինի սալայատակ հաստատրամ անփապելի (խորշ չունեցող – Ա. Հ.) և անպայթելի՝ նեցուկ անվթար զբազմութիւն ջուրցն յինքեան ունելով, գոր և ծով անուանենք»⁴⁶: Ըստ Շիրակացու՝ ջուրը գորությունն է երկնքի ու երկրի միջև, հողը՝ հայտնությունը: Ջրից արձակված օդը ծովից դեպի երկնք է բարձրանում, բայց երբ օդն անհանգիստ է, ընկղմվում է ջրի «ընդերքը», «...քանզի ծով, որ զծածուկ ոչ ունի՝ արտաքին է... Եւ բազումք անգամ վնասք և շարժմունք առնեն...»⁴⁷: Ահա այս «շարժմունքն» է պատճառ դառնում ավելոծության ու ջրային հողմի սաստկացման, ուստի պատահական չէ, որ գետերից, աղբյուրներից ու ծովերից սկիզբ առնող հողմերը կոչվում են ջրային. «...եւ որ ի գետոց ելանէ, կամ յաղբերաց, կամ ի ծովէ՝ ջրային ասեն»⁴⁸: «Յաղագս երկրի» ձառում երևույթը նույն կերպ է մեկնում նաև Հովհաննես Պլուզ Երզնկացին, ըստ որի՝ երկրի ներսում կան հրի, ջրի և քամու (օդի) երակներ, և որտեղ հրի երակներն են, տաք ջուրն է ի վեր արձակվում, իսկ «...թէ հնչէ քամին ի ներքոյ երկրի, տեղիք որ նաւար լինի՝ յերեսք ելանէ եւ շարժ լինի հրամանաւն Աստուծոյ, յորժամ կամենայ խրատել զմեզ»⁴⁹:

Մատենագրության մեջ, ի մասնավորի՝ ձեռագրերի հիշատակարաններում և ժամանակագրություններում, մեր շնորհաշատ գրիչներ

46 Անանիա Շիրակացի, նշվ. աշխ., էջ 9:

47 Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 334:

48 Նույն տեղում, էջ 320:

49 Յովհաննես Երզնկացի, Մատենագրություն, հատ. Ա. Ճառեր եւ քարոզներ, բնագրերը հրատարակության պատրաստեցին Ա. Երզնկացի Տեր-Սրապյանը և Է. Բաղդասարյանը, ներածականները՝ Է. Բաղդասարյանի, Եր., 2013, էջ 237:

որը չեն շրջանցել նաև ծովահողմի հետևանք նավաբեկության ու ջրահեղձման դեպքերը: Այսպես՝ ՄՄ 5521 Գանձարանի 1602 թվականի հետագայում հավելված հիշատակարանում նշվում է, որ ձեռագիրը ստացած Բարսեղ կրոնավորը գրչագիրը վերակազմել է տվել ի հիշատակ իր ծնողների, ազգականների, նաև եղբոր՝ Խլղաթի, «...որ ի բեկանել նախն ծովահեղց եղաւ և եթող մեզ սուք անմխթար...»⁵⁰, իսկ Սպահանում 1635 թ. ընդօրինակված Ավետարանը նկարագարդած Ստեփանոս Ջուղայեցու թողած հիշատակարանը ձեռագրի «դեգերումների» ու ջրասույզ լինելուց հրաշքով փրկվելու մասին վկայող բացառիկ հուշարձան է⁵¹: Հիշատակագրի հաղորդմամբ՝ Ավետարանը «ոսկով և լաջվարդով» նկարագարդելուց հետո Ստեփանոս երեցն իր կնքահոր միջոցով այն ցանկացել է ուղարկել Լիմ անապատի Ստեփանոս վարդապետին⁵², որի դիմաց հիսունհինգ դուռուշ պիտի ստանար: Պարզվում է՝ առաքիչը Լիմ ուղևորվելու փոխարեն նստել է նավն ու գնացել Դատվան՝ ձեռագիրն ավելի մեծ գումարով վաճառելու նպատակով: Սակայն «...հարեաւ հողմ ի ծովոյն, ի վերայ նախն, և նոքա տարեալ նաւն ի յԱրտամետ... Եւ առաւօտն ելեալ տեսին, զի նաւն ընկըղմեալ էր ի մէջ ծովոյն»⁵³: Տասնհինգ օր հետո, երբ մեծ դժվարությամբ նավը դուրս են բերել ցամաք, տեսել են, որ Ավետարանը գրեթե անվնաս է մնացել: Նորոգման համար այն կրկին Սպահան՝ Ստեփանոս Ջուղայեցու մոտ են տարել, որից հետո Ստեփանոսն անձամբ գրչագիրը տեղափոխել է Համադան, որտեղ էլ այն դարձել է աստվածասեր ոմն Ասլանի ընտանիքի սեփականությունը:

Ինքնին ուշագրավ է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագրական հավաքածուում պահվող 1332 թ. ընդօրինակված Ավետարանի (Եղմ. 2649) հրաշագործության մասին հայտնի ավանդազրույցը, ըստ որի՝ նավաբեկության ժամանակ այն

50 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ. դար», հատ. Ա (1601-1620 թթ.), կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Եր., 1974, էջ 51, N 59:

51 Ձեռագիրն էջմիածնի հավաքածուում է՝ N 240 (տես «Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», կազմեց՝ Տեր-Միքայելյան Ն., «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1965, N Ժ, էջ 62-63):

52 Հիշատակված է Լիմ անապատի վանահայր Ստեփանոս վրդ. Շատախեցին, որը հաջորդել է Ներսես Մոկացուն և աչքի ընկել ձեռագրաստեղծման ու ձեռագրապահպանման գործում ունեցած ավանդով: Նա ոչ միայն հանձնարարականներ է տվել անապատի միաբաններին, այլև անձամբ է գբաղվել ձեռագրերի ընդօրինակմամբ, նաև կազմարարական գործով (տես Թումանյան Լ., Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները, Եր., 2019, էջ 228-229):

53 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ. դար», հատ. Բ (1621-1640 թթ.), կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Եր., 1978, էջ 633, N 934/բ:

եղել է Երուսաղեմի հայոց պատրիարք Հովակիմ Քանաքեռցու (1775-1793) մոտ ու հրաշքով փրկել նրա կյանքը⁵⁴, որից հետո Ավետարանը կոչել են «Ծովի» («ծովէն ելած»)՝ իսկ պատրիարքը ստացել է Ծովածին մականունը⁵⁶:

Առավել հետաքրքիր է Երուսաղեմի Ս. Հարության տաճարում 1725 թ. մայիսի 10-ից հուլիսի 3-ն ընկած ժամանակահատվածում ընդօրինակված ՄՄ 616/Բ. «Հարցմանց Գիրք Գրիգորի Տաթևացույ» ձեռագրի հիշատակարանում գրիչ Մարտիրոս սարկավագ Կարբեցու (հիշվում է նաև Երևանցի) թողած ընդարձակ հիշատակարանը, որում, ի թիվս այլ մանրամասների, գրիչը ներկայացնում է նավաբեկությունից իր՝ հրաշքով փրկվելն ու տեղի ունեցած աղետի հետևանքները: Հիշատակագրի հաղորդմամբ՝ Ստամբուլից (Կ. Պոլսից) Երուսաղեմ մեկնող ուխտավորների նավը քամուց քշվել ու ջրասույզ է եղել, իսկ ինքը փրկվել է, քանի որ Իզմիրում (Զմյուռնիայում) Երեմիա վրդ. Ստամբուլցու առաջարկով իջել էր նավից՝ այլ ուխտավորների նավ ուղեկցելու նպատակով: Բարձր գնահատելով հիշատակարանի աղբյուրագիտական արժեքը՝ այդ հատվածը մեջբերում ենք առանց կրճատումների. «...ի մեծ ծան (ծովն) Երուսաղեմայ, ի գալն Իստամբուլու, որ ամ յամէ գային զտէրունական ուխտաւորքն վասն Աստուծոյ ծառայութեան սուրբ տեղեացս, եղեւ յուժ սուգ ազգիս մերում, եւ ընկղմեցաւ գնաւն, որ էին ԲՃ. (200) ուխտաւոր հայ աւելի կամ պակաս, թող զայլ ազգս քրիստոնէից Ճ. (100) աւելի կամ պակաս, յոյնք կային, որ է հռոմ, եւ բազում տաճիկ նաւայվարք, ամենքեան ընկղմեցան, եւ մնաց զոր զերծան ի ծովէն՝ Բ. (2) հայ եւ Բ. (2) յոյն, եւ ասէին, թէ Ե. (5) տաճիկ է զերծեալ, բայց ոչ տեսաք: Եւ ես մէջ նաւին էի ընչիւք իմօք՝ եկեալ դէմ Իզմիրու: Զիս ուղարկեց վարդապետն Երեմիայ, որ էր Իստամբուլցի, յիս ուղարկեայց Իզմիր, թէ՛ գնայ անդ այլ ուխտաւոր կայ, բեր: Եւ ես գնացի, առի զուխտաւորսն, եւ եկեալ ոչ հասի, քանզի հովն առեալ էր...»⁵⁷: Այսինքն՝ նավաբեկության հետևանքով զոհվել է

54 Տե՛ս Հարությունյան Խ., Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Եր., 2019, էջ 257:

55 Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. 8, կազմեց՝ Նորայր արք. Պողարեան, Երուսաղեմ, 1977, էջ 276:

56 Տե՛ս Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղեմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց՝ Մեսրոպ եպս. Նշանեան, հատ. Բ, Երուսաղեմ, 1931, էջ 796:

57 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Գ, կազմեց՝ Եգանեան Օ., Եր., 2007, սյուն 73: Ավելի վաղ հիշատակարանի բովանդակությունն արտացոլվել է նաև

ավելի քան երեք հարյուր ուխտավոր՝ երկու հարյուրից ավելի հայ, հարյուրից ավելի հույն, մի քանի թուրք նավաստի, իսկ փրկվել են միայն երկու հայ, երկու հույն, հինգ թուրք, հրաշքով նաև ինքը՝ Մարտիրոս սարկավագը:

Ուշագրավն այն է, որ հիշատակարանում վկայված աղետալի դեպքը վավերացվում է ժամանակակից այլ վկայագրի, այս անգամ՝ վիմագրի միջոցով՝ պահպանված **Երուսաղեմի Ս. Հարության տաճարի** արևելյան մասում կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (հայտնի նաև Ս. Հեղինե անունով)⁵⁸ հյուսիսային պատին՝ Ս. Վարդան մատուռի մուտքի վերին աջ հատվածում, 11 տող (նկ. 4ա, բ):



Նկ. 4ա, բ. Նավաբեկության մասին վկայող վիմագիրը, 1724 թ. (լսնկ.՝ Խ. Հարությունյանի, 2019 թ., գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

Ի ԹՎԻՆ՝ ՌՃՀԳ. (1724) ԱՄԻՆ, [Ի՛] ԲԻԻԶԱՆԴԻՅԱՆԵՆԵՆԵԼ / ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՈՒՒՏԱԿԱՆՈՐԱՅ ՆԱԻՆ Ի ՄԷԶ ԾՈՎՈՒՆ / ԸՆԿՂՄԵՑԱԿԻ ՎԱՅՍՆ՝ ԾՈՎԱՅԵԼԱԿԱՆ ՄԵՂԱՅ / ՄԵՐՈՑ, ԵՒ / ԱՄԵՆԱՅՆ՝ ՈՒՒՏԱԿԱՆՈՐՔՆ ՀԱՅՈՑ, / ՈՐՔ Ի ՄԷԶ ՆԱԻՆ ԷԻՆ՝

«Արարատ»-ի էջերում (տես «Ս. Էջմիածնի գրադարան» (անստորագիր), «Արարատ», Ս. Էջմիածին, 1888, N Ա, էջ 31):
 58 Վերջերս Իսրայելի գիտությունների ակադեմիայի անդամ, հայագետ Մայքլ Սթունն ու ծեռագրագետ, բ. գ. թ. խաչիկ Հարությունյանը հողվածաշարով անդրադարձել են Ս. Հարության տաճարի հայերեն վիմագրերին՝ շարքի երրորդ մասը նվիրելով Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու՝ մեկ տասնյակից ավելի նորահայտ վիմագրերին ու նախորդ հրատարակություններում արված որոշ ճշգրտումների (տես **Սթուն Ս., Հարությունյան Խ.,** Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարի հայերեն արձանագրությունները: Մաս երրորդ: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (Ս. Հեղինեի եկեղեցի), «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2020, N 4, էջ 179-205):

ԿԱՂԻՐԳԼԱԿԱՆՈՒՄԵՆ ԵՒ ԱՇԽԱՂԻՐՎԱԿԱՆՎԱՆՔ, / ԱՐԲ ԵՒ ԿԱՆՍԵՐՎԱՆՔ,
 ԶՐԱՇԵՂՁ ԵՂԵՂԱԿ / ՄԵՆԱՆ, ԵՒ ԵՂԵՂԻ ՍՈՒԳ ՄԻՆԾ ՄԵԶ, ՎԱՍՍԻՆ
 ՈՐՈՅ / ԵՄՍ ՏԼԱՌԿԱՊԵՂԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ ԻԲՐ ՊԵՏՍ, ՅՈՒՍՈՎՆ, ՈՐ
 ԱՌԱՍՏՈՒԱԾ ԿԱՆԳՆԵՅԻ ԶՍՈՒՐԻԲ / ԽԱՍՎԱՆՎԱՆ
 ՓՐԿՈՒԹԵՂԱՆՎԱՆ ԸՆԴՈՒՅՆՆԵՐՆԵՐԻ ԵՒ ԸՆԹԵՂԵՐՑՈՂՎԱՆՔԻ ԱՍՏՈՒԱԾ
 ՈՂՈՐՄԻ ԱՍՎԱՅԼԵՐ⁵⁹:

Դեռևս անցյալ դարի սկզբներին այս արձանագրությունը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի թանգարանում տեսել, գրչանկարել և վերծանել է ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը՝ «ի Բիզանդիոյ»-ի փոխարեն կարդալով «իբրեւ», 2-րդ տողում «ուխտաւորաց նաւն»-ը՝ «ուխտիք յամէն», 4-րդ տողում «ամենայն»-ը՝ «սուրբ» և 8-րդ տողում «իբր պետս»-ը՝ «իբրեւ Պետրոս»⁶⁰: Հետագայում դեռևս թանգարանում գտնվող վիմագրի վերծանությունը հրատարակել է Մկրտիչ Եպս Աղավնունին՝ նշելով, որ «...գիրն երկաթագիր է և քարը մէջտեղէն կոտրած»⁶¹: Աղավնունու վերծանությունը ևս գերծ չէ տարընթերցումներից, մասնավորապես՝ 2-րդ տողում «նաւն»-ի փոխարեն՝ «ամէն», 8-րդ տողում «իբր պետս»-ի փոխարեն՝ «րաբունապետս»: Ըշգրիտ է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի քարտուղար և վարժապետ Տիգրան Սավալանյանցի վերծանությունը, որի հաղորդմամբ՝ արձանագրությունը պահպանվել է խաչքարի պատվանդանին և պահվել Սրբոց Հակոբյանց վանքի վարժարանի հնադարանում⁶²: Վերջերս արձանագրությունը հրատարակել է նաև բանասեր Նորայր Պողոսյանը, որը թեև չի հիշատակում Աղավնունուն, սակայն հետևել է նրա վերծանությանն ու նշել, որ «երկաթագիր այս վիմագիր յիշատակարանը գտնուում է Ս. Յակոբի թանգարանում...»⁶³: Կրկին նկատենք, որ արձանագիր քարը ներկայումս ազուցված է Ս. Հարության տաճարի ներսում կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային պատին, սակայն թե երբ է տեղափոխվել թանգարանից, հայտնի չէ⁶⁴: Քարի վերնամասը

59 Macler F., Les Arméniens en Syrie et en Palestine, Marseille, 1919, p. 7-9, fig. 2, **Աղանունի Մկրտիչ Եպս.**

Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 86, **Սաւալանյանց Ս.**, նշվ. աշխ., էջ 1250:

60 Տե՛ս Macler F., նշվ. աշխ., էջ 9:

61 **Աղանունի Մկրտիչ Եպս.**, նշվ. աշխ., էջ 86:

62 Տե՛ս **Սաւալանյանց Ս.**, նշվ. աշխ., էջ 1250:

63 **Պողոսեան Ն.**, Գրիգոր Շղթայակիր Պատրիարք, Երուսաղեմ, 2017, էջ 129-130:

64 Վիմագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և լուսանկարի տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկեր, ք. գ. թ. Խաչիկ Հարությունյանին:

կոտրված է, իսկ վիմագրում վկայված «կանգնեցի գսուրբ խաչս» արտահայտությունն ինքնին հուշում է, որ այն կոթողային հուշարձանի մաս է կազմել, ըստ Սավալանյանցի՝ խաչքարի պատվանդանը, որը, ըստ ամենայնի, նկատի ունի խաչաքանդակ կոթողի ստորին մասը:


Ինչ վերաբերում է վիմագրի բովանդակությանը, ապա կարելի է ասել, որ այն լրացնում-վավերացնում է նավաբեկության մասին մատենագրությունից արդեն հայտնի պատմությունը, ի մասնավորի՝ վիմագրում ջրահեղձված ուխտավորների շարքում հիշատակվում են հոգևորականներ, աշխարհականներ, տղամարդիկ ու կանայք, իսկ կոթողը կանգնեցնող «տառապեալ» Գրիգորն էլ Երուսաղեմի հայոց բազմաբեղուն պատրիարք Գրիգոր Շղթայակիրն է (1715–1749), որը հանձն է ամել աղետի գոհերի հիշատակին արձանագիր կոթող կանգնեցնել⁶⁵:

Չնայած նրան, որ նախորդ հրատարակիչները վիմագրի թվականը ՌՃՀԴ (1725) են կարդացել, մենք հակված ենք ՌՃՀԳ (1724) ընթերցմանը՝ նկատառելով վիմագրում Գ և Դ գլխատառերի գծագրական ակնհայտ տարբերությունը (տե՛ս գրչանկարը): Հիշատակարանի հետ ունեցած մեկ տարվա անհամապատասխանությունը կարող էր պայմանավորված լինել ձեռագրի ավելի ուշ ընդօրինակված լինելու հանգամանքով⁶⁶, ինչը հավանական է, քանի որ Մարտիրոս սարկավազը, նավաբեկությունից փրկվելով, ավելի ուշ է հասել Երուսաղեմ, որտեղ էլ՝ Ս. Հարության տաճարում, ընդօրինակել է ձեռագիրն ու հիշատակարանում արձանագրել տեղի ունեցած դժբախտ պատահարի մասին:

Ծովի ալեկոծման և դրա հետևանքով ջրահեղձման մասին է վկայում **ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի** արևելյան եզրին գտնվող Իշխանավանքի գերեզմանոցի տապանագրերից մեկը՝ պահպանված պատվանդանի մեջ ագուցված օրորոցածև տապանաքարի երկու կոր նիստերին՝ բաղկացած 4-ական տողերից (նկ. 5ա, բ):

65 Տե՛ս Պողոտան Ն., նշվ. աշխ., էջ 129:

66 Թե՛և գրչի հարորդմամբ՝ դեպքը տեղի է ունեցել «այսմ տարիս», այսինքն՝ միևնույն տարում (տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Գ, սյուն 71):



ԱՅՍԵՅ ԱՆԳ ԿՍՆ ԱԻԹԱ Մ ԻԼԻՆ ՈՐԴ
 ԱԻ ԱԵ ԻԵ ՈՐ ԹԵՐ Ի Տ Ա Ս ԱԿ ԱԲ Դ
 ՈՒ ԵԿ ԱԻ Ի Ք Ս Լ Ա Ս Ե ՆՍՄՈՎ Ի Ը Ա Ի
 ՄՈ ԱՆ Ե Լ ՈՎ Ի Ծ ՈՎ Ը ՄՈ ԱԿ Մ Ե Ր ՈԳ



ԵՂԵԻ ԱԼԵԿՈԾ ՈՒՄ Ի ԾՈՎ Ի Ն Ե Ի ՄԵ Ր
 Ի ԸՆՈՒՐ ԵՒ ՍՈՒԳ Ա Ն Մ Ի Թ Ա Ր Ե Ծ Ն
 ԱԳ Ի Ի Ր ՈԳ ՈՎ ԿԱՐԴ Ե Բ Թ Ի Ն Ե Կ Ե
 Բ Ի Բ Ս Թ Վ : Ն Ղ :

Նկ. 5ա, բ. Ծովի պեկոծման հետևանքով ջրահեղձ եղած Ավթանդիլի տապանագիրը (լսնկ.՝ արտատպված՝ ԴՀՎ, պրակ IV, աղ. XLVII, գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԻԹԱՆՍԻԼԻՆ՝ ՈՐԴՆՈՅ / ԱԻԱՆԻՆ, ՈՐ ԹԵՐԻ
 ՀԱՍԱԿԱԻ Փ/ՈՒԵՑԱԻ Ի ԲՐԻՍՏՈՅՍ. ԼԱՍԷ ՉՍՏՈՎ Ի ՆԱԻ /
 ՄՏԱՆԵԼՈՎ Ի ԾՈՎ, ԸՍՏ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ / ԵՂԵԻ ԱԼԵԿՈԾՈՒՄ Ի
 ԾՈՎԻՆ, ԵԻ ՄԵՈՒԱԻ / Ի ՋՈՒՐ, ԵԻ ՍՈՒԳ ԱՆՄԻԻԹԱՐ ԷԹՈՂ
 ԾՆՈՂԱՅ/ԱՑ ԻԻՐՈՑ, ՈՎ ԿԱՐԴԵՔ՝ ՅԻՇԵՑԷ/Ք Ի ԲՐԻՍՏՈՅՍ,
 ԹՎԻՆՆՂ. (1141)⁶⁷:

Տապանագրի նախորդ հրատարակիչ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը 3-4-րդ տողերում հավանական է համարել նաև

67 ԴՀՎ, պրակ IV. Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ Բարխուդարյան Ա., Եր., 1973, էջ 148, արձ. 601:

«լասէ նստով ի նաւ մտանելով. ըստ մեղաց մերոց եղև» վերծանութիւնը⁶⁸, որը, սակայն, բնագրին չի համապատասխանում: Վիմագրի բովանդակությանը վերջերս անդրադարձած հնագետ Ավետիս Գրիգորյանն էլ կարծում է, որ տապանագրում հիշատակված Ավանի որդի Ավթանդիլը լաստանավ է նստել և ծովի ալեկոծության հետևանքով ջրահեղձ եղել⁶⁹: Տապանագրում հիշատակված ծովը, անշուշտ, Սևանա լիճն է, որտեղ էլ Ավթանդիլն ավանդել է իր երիտասարդ կյանքը:

Նկատենք, որ Սևանը տարածաշրջանի բարձրադիր լճերից է, որը հատկապես գարնանն ու աշնանը փոթորկահույզ է, իսկ ձմռանն ավամերձ հատվածները սառցակալում են, հազվադեպ՝ նաև լճի ողջ մակերեսը⁷⁰: Այդ է պատճառը, որ լաստերով ու փոքր նավերով նավարկությունն այստեղ հիմնականում ամռանն է կատարվում: Լիճը նավակայաններ է ունեցել կղզու (ներկայումս՝ թերակղզու) մոտ, Նորատուում, իսկ ավելի ուշ՝ այժմյան Գավառի, Մարտունու և Վարդենիսի ավամերձ հատվածներում: Սրանցից ճարտարապետության դոկտոր Հովհաննես Խալփախյանը հիշատակում է 1849 թ. Նորատուսի մոտ հայտնաբերված երկշաք ցցերի վրա կառուցված նավամատույցի մնացորդները, որոնք ժամանակին սխալմամբ կամրջակներ են համարվել⁷¹: Ըստ ճարտարապետի՝ նման նավամատույցները «...նախատեսված էին թիավարվող և առագաստային բեռնատար ու մարդատար ոչ մեծ նավերի համար...»⁷²:

Դառնալով խնդրո առարկա տապանագրին՝ պիտի հատկանշենք «լասէ չստով» նավ մտնելու մասին ուշագրավ հիշատակութ-

68 Տե՛ս նույն տեղում:

69 Տե՛ս **Գրիգորյան Ա.**, Արտակարգ իրավիճակները և ճգնաժամային կառավարման միջոցառումները միջին դարերում, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածու, N 13, Եր., 2018, էջ 238:

70 Սևանա լճի սառցապատման, դրա հետևանքով նաև ձկնարդյունաբերության խափանման մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել 19-րդ դարի մամուլում: Այսպես՝ 1882 թ. մարտի 29-ին Նոր Բայազետից (ներկայումս՝ Գավառ) հայտնում էին, որ լիճը դեռևս սառած է, իսկ գեղարքունի և իշխան ձկները հազվադեպ են պատահում (տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1882, 6 ապրիլի, N 56): Կամ 1898 թ. մարտին Երևանից գրել են, որ ձմեռը սաստկացել է, Սևանա լիճը տևական ժամանակ ամբողջովին չէր սառել, բայց այդ տարի սառել է, ինչը համարում են քամիների սակավության հետևանք, քանզի «...քամիք շատ սակաւ է եղել և լիճը մնալով անդորր կանգնած ընդունել է սառուցի կեղև, որը քանի զնալով հաստացել է» («Նոր Դար», Թիֆլիս, 1898, 12 մարտի, N 44): Իսկ 1903 թ. հունվարին Նոր Բայազետից գրել են. «Այս տարի մեր գաւառում սարափելի ցուրտ է: Սևանի լիճը այս տարի սառել է, մի բան, որ շատ քիչ է պատահում. նաւերը սառուցը կտրտելով՝ հագիւ են կարողանում ճանապարհ բանալ իրանց համար» («Մշակ», 1903, 25 յունվարի, N 17): Այս տեղեկությունները մեզ հաղորդելու համար շնորհակալություն ենք հայտնում աղբյուրագետ Արմեն Ասատրյանին:

71 Տե՛ս **Խալփախյան Հ.**, Միջնադարյան Հայաստանի նավահանգիստներն ու նավակայանները, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 1963, N Բ, էջ 38:

72 Նույն տեղում:

յունը: Լասը խոտհարքի ժամանակ մանգաղի կտրած-թափած խոտի կամ հացահատիկի ավելորդ մասն է, որը չորացնելուց հետո հիմնականում պարան, մուրք կամ խորոմ էին պատրաստում⁷³: Գրավոր սկզբնաղբյուրներից կամ մասնագիտական գրականությունից մեզ հայտնի չեն նավ մտնելու համար կիրառելի լասե հողաթափերի մասին վկայություններ: Միննույն ժամանակ հարկ է նշել, որ, օրինակ, Սյունիքում կաշեգործները մեծ քանակությամբ կաշի էին օգտագործում տրեխներ կարելու համար, մանավանդ որ մարդիկ դրանք օգտագործում էին ջրի գնալիս կամ անձրևի ու ձյան ժամանակ⁷⁴, իսկ Սասունում լայն տարածում են ունեցել խարուկ կամ հետիկ կոչվող ձյուղահյուս ոտնամանները, որոնք գործում էին ինչպես կանեփի թելից⁷⁵, այնպես էլ կարմիր ուռենու կամ թեղի դալար ձյուղերից, և ոտքին էին կապվում կանեփե թոկերով⁷⁶: Սաստիկ ձմռանը մեծապես կիրառվել են նաև ուռենու և թխկու բներից պատրաստված ութաձև փայտե լականները, որոնց կանթ-կապիչները դարձյալ կանեփի թելից էին ստանում⁷⁷: Համանման այլ օրինակներ ևս պարզում են, որ Հայաստանում, այնուամենայնիվ, իբրև հետիոտն փոխադրամիջոցներ օգտագործվել են նմանատիպ ոտնամանները, սակայն դժվար է ասել, թե Սևանի ավազանում լասե հողաթափերը գործառույթային ինչ նշանակություն են ունեցել. միգուցե ձկնորսության ժամանակ են հագել:

Ինչպես տեսնում ենք, թե՛ այս, թե՛ նախորդ վիմագրերում աղետի բուն պատճառ է համարվել մեղքը, և «վասն մեղաց մերոց» բանաձևային դարձած արտահայտությունը լավագույնս բնութագրում է Աստծու զայրույթը մարդկանց անհնազանդության ու գործած մեղքերի պատճառով: Հնուց ի վեր մարդկանց ընկալումներում դժբախտությունների, այդ թվում նաև՝ երաշտի ու զանազան հիվանդությունների պատճառը հենց մեղքն էր⁷⁸: Դա լավագույնս

73 Տե՛ս Մայխասեսնց Սո., Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, Եր., 1944, էջ 185:

74 Տե՛ս Լիսիցյան Սո., Ջանգեղուրի հայերը, Եր., 1969, էջ 162:

75 Տե՛ս Պետրոյան Վ., Սասնա ազգագրությունը, Եր., 1965, էջ 169-170:

76 Տե՛ս Պետրոյան Լ., Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ. Ա. Հետիոտն և գրաստային փոխադրամիջոցներ (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հատ. 6, պատ. խմբ. Վարդույան Ղ., Եր., 1974, էջ 139, աղ. III, նկ. 3-4:

77 Տե՛ս Պետրոյան Վ., նշվ. աշխ., էջ 177-178:

78 Տե՛ս Элиаде М., Миф о вечном возвращении. Архетипы и повторяемость, СПб., 1998, էջ 152: Տե՛ս նաև Ավագյան Զ., Մեղքի մասին պատկերացումները հայկական հեքիաթներում, «Հայ ժողովրդական մշակույթ XVI: Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում. Ղերենիկ Վարդույանի ծննդյան 90-ամյակին

դրսևորվել է հատկապես ժողովրդական առած-ասացվածքներում, որոնցում երբեմն չափազանցության է հասնում մարդու մեղավորության գաղափարը. «Մարդ օր կա՝ մեղքի տուն ա» կամ «Մարդը քուն, մեղքը արթուն», մեկ ուրիշն էլ՝ «Մեղավորի մեղքն թմրի արդարը»⁷⁹:

Բնորոշ օրինակ է նաև դեռևս հայոց ՆՀԸ (1029) թվականի հոկտեմբերի 3-ին տեղի ունեցած երկնային արտասովոր երևույթը, որը մեկնել է միջնադարի ականավոր տոմարագետ Հովհաննես Կոզեմնը: Երևույթն ուղեկցվել է հյուսիսից ծագող լույսի՝ Երկիր սաստիկ ներթափանցմամբ, որը կտրուկ փոխվել է խավարի, քանզի կապանքներից Քրիստոս ազատել էր սատանային. «....զի քակին ոմանք ի հաւատոց եւ պարծանաւք ուրանան գՔրիստոս. վասն այտորիկ խաւար կալաւ զամենայն արարածս»⁸⁰:

Վարդենիկում պահպանված մեկ այլ վիմագրի հաղորդմամբ՝ ջրահեղձ է եղել գյուղի բնակիչ Ստեփանոս քահանան, որի ծնողները՝ Լիպարիտն ու Խուրիկը, իրենց զավակի անժամանակ մահվան կապակցությամբ զույգ խաչքարեր են կանգնեցրել, որոնք ներկայումս ագուցված են գյուղի **Ս. Աստվածածին եկեղեցու** բեմառէջքին: Խաչքարերից մեկի վիմագրում վկայված է երիտասարդ քահանայի վաղահաս մահվան պատճառը, ըստ որի՝ նա «....երիտասարդ ամօք, ուժ ընդ սկա մարմնով ի ծովամէջն ընկղմեցօ(=աւ).... թվին Ջ. (1451)»⁸¹: Համանման է **Ղրիմի Ս. Խաչ եկեղեցու** արևմտյան մուտքի ձախ կողմում ագուցված 17-րդ դարով թվագրվող խաչքարի վիմագիրը, ըստ որի՝ կոթողը կերտվել է ոմն Հովհաննեսի հիշատակին, որը «...ի ծովուն ընկղմեցաւ»⁸²: 13-14-րդ դարերով թվագրվող մի հետաքրքիր օրինակ էլ հայտնի է **ՀՀ Սյունիքի մարզի Տանձափարախի (Բեխի) անապատից**. սպիտակավուն կրաքարից 9.5x6 սմ չափերով զարդաքանդակ բեկորը հայտնաբերվել է համալիրի սեղանատան հարավային պատի լիցքից (նկ. 6ա, բ): Քարի կողերեսին մասնակիորեն պահպանված արձանագրությունը թերևս վկայում է

նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», խմբ.: **Հարությունյան Ս., Մարության Հ.** և այլք, Եր., 2014, էջ 417-425:

79 **Ղանալանյան Ա.**, Առածանի, Եր., 1960, էջ 132:

80 **Յովհաննես Տարանեցի Կոզեմն**, Պատմութիւն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկա աւուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզեմն՝ հայոց վարդապետի, քննական բնագիրը և առաջաբանը **Յ. Քնուեանի**, «Մատենագիրք Հայոց», հատ. ԺԶ, Եր., 2012, էջ 81:

81 ԴՀՎ, պրակ IV, էջ 156, արձ. 635: Հմմտ. **Գրիգորյան Ա.**, նշվ. աշխ., էջ 239:

82 ԴՀՎ, պրակ VII. Ուկրաինա, Մոլդովա, կազմեց **Գրիգորյան Գ.**, Եր., 1996, էջ 108, արձ. 224:

առարկայի՝ ծովից փրկված լինելու մասին. «...ը փրկեց[աւ] /ը
զծովն /ն արաւցէ]...»⁸³:



Նկ. 6ա, բ. Տանձափարալից հայտնաբերված կրաքարե բեկորը
(լսնկ.՝ Ա. Նալբանդյանի, գրչ.՝ Ա. Սահակյանի, 2016 թ.)

Հնագետ Արման Նալբանդյանը չի բացառում գտածոյի՝ մասնատուփի կափարիչ լինելու հավանականությունը⁸⁴՝ նման Քարվաճառից⁸⁵, Մեղրիից⁸⁶, Տավուշ ամրոցից⁸⁷ հայտնի գտածոներին, որը թերևս հրաշքով փրկվել է նավաբեկությունից:

Անշուշտ, հայ վիճագրության հարուստ շտեմարանում նմանօրինակ երևույթների մասին հիշատակությունները սպառված համարվել չեն կարող: Կարևոր է արձանագրել այն, որ մեր բեղուն գրիչների վավերացրած երկնային ու երկրաբանական երևույթների մասին վկայող վիճագիր «մատունքները», մատենագրական աղբյուրներին զուգահեռ, յուրօրինակ կերպով փաստագրում և ուսումնասիրողին են ավանդում պատմության տարբեր շրջափուլերում տեղի ունեցած բնական աղետների ու երևույթների հավաստի ժամանակագրությունն ու հետևանքային դրսևորումները:

Ստորև ներկայացնում ենք վերոբերյալ հիշատակություններն ամփոփող աղյուսակը:

83 Նալբանդյան Առ., Նալբանդյան Ա., Բաղայան Հ., Ալեքսանյան Տ., Տանձափարալի անապատի 2012-2019 թթ. պեղումների արդյունքները, «Հուշարձան» տարեգիրք, հատ. ԺԶ, Եր., 2021, էջ 94:

84 Տես նույն տեղում:

85 Տես Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 104-105: Կրաքարե փոքրաչափի (30x20x4.5 սմ) սալը, որը, ըստ թիկունքի արձանագրության, կերտվել է հայոց ՅԿԵ (916) թ., դեռևս 1990-ականներից պահվում է Փանծասարի վանքում: Առաջին հրատարակիչ Սամվել Կարապետյանն այն խաչքար է համարում (տես Կարապետյան Ա., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., 1999, էջ 53-54):

86 Տես Նալբանդյան Ա., Սիմոնյան Ա., Նորահայտ պատառիկներ Մեղրիի Ս. Հովհաննես եկեղեցու պեղումներից, «Բանբեր Մատենադարանի», Եր., 2020, N 29, էջ 200:

87 Տես Ալեքսանյան Տ., Տավուշ ամրոցի 2021 թ. հնագիտական պեղումների արդյունքները, հաշվետվություն ներկայացված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում 2021 թ. հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված նստաշրջանին (12.04.2022 թ.):

Ը/հ	Երևույթը	Տեղը	Ժամանակը	Աղբյուրը
1	Արեգակի խավարում	ՀՀ Արագածոտնի մարզ, Կոշի որմնափակ խաչքար	ՈՒԴ - 1176 թ., ապրիլի 11	Շահինյան, 1968, 198. Մուրադյան, 1977, 106. Պետրոսյան, 2008, 366.
2	Արեգակի խավարում	ՀՀ Տավուշի մարզ, Առաքելոց վանքից 200 մ հարավ-արևմուտք գտնվող զույգ եկեղեցիներ, խաչքարի թիկունքին	ՉԺԶ - 1267 թ.	ԴՀՎ/6, 211/345. Շահինյան, 1984, 60.
3	Արեգակի և Լուսնի խավարում (ըստ Ավետարանի)	ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակի «Ծակ խաչ»	ՉԺԷ - 1268 թ.	Հովսեփյան, 1987, 84-85. Սաղումյան, 1998, 195. Պետրոսյան, 2008, 217.
4	Ծովի ալեկոծում, նավաբեկություն, ջրահեղծում	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ, տապանաքար	ՇՂ - 1141 թ.	ԴՀՎ/4, 148/601.
5	Նավաբեկությունից փրկում	ՀՀ Սյունիքի մարզ, Տանձափարախի անապատ, կրաքարե սալաբեկոր	13-14-րդ դդ.	Նավբանդյան և այլք, 2021, 94.
6	Ջրահեղծում	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիկ, խաչքար	Զ - 1451 թ.	ԴՀՎ/4, 156/635.
7	Ջրահեղծում	Ղրիմ, Ս. Խաչ վանք, տապանաքար	17-րդ դ.	ԴՀՎ/7, 108/224.
8	Ծովի ալեկոծում, նավաբեկություն, ջրահեղծում	Երուսաղեմի Ս. Հարության տաճար, ազուցված արձանագիրքար	ՌՃՀԳ - 1724 թ.	Մակլեր, 1919, 7-9. Աղավնունի, 1929, 86. Պողոսյան, 2017, 129-130. Սավալանյան, 1931, 1250.

Արսեն Է. Հարությունյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայկական վիճագրությունն ու ձեռագրագիտությունը: Հեղինակ է 9 գրքի և 8 տասնյակից ավելի գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ ars.vimagraget@gmail.com

**THE NATURAL DISASTERS AND THE HEAVENLY PHENOMENA
IN EPIGRAPHS**

Part II: Solar Eclipse, Sea Storm

Arsen E. Harutyunyan

Candidate of Sciences in History

Key words – epigraph, solar and lunar eclipse, Anania Shirakatsi, wall placed khachkar (cross-stone) of Kosh, Arakelots (Apostles) Monastery, “Tsak Khach” (Hole cross) of Ashtarak, sea storm, shipwreck, drown.

Some evidence on solar eclipse and sea storm, in particular about shipwrecks, drownings and other similar cases are preserved in Armenian epigraphy. The literary figures and researchers have often referred to the phenomenon of solar and lunar eclipses in cosmological and book-keeping literature. It was also reflected in mythology and folklore. The epigraphic mentions about this phenomenon are preserved in the epigraphs of the pedestal of wall placed khachkar (cross-stone) of Kosh (erected in 1195), on the back side of khachkar located not far from Arakelots (Apostles) Monastery (in 1267), as well as on the memorial of “Tsak Khach” (Hole Cross) of Ashtarak (in 1268).

As for the cases of shipwreck and drown caused by the sea storm, besides in the literary sources, particularly the evidence kept in the colophons of manuscripts, remarkable episodes have been preserved in epigraphs, too. Among them is noteworthy the epitaph dated back to 1141, which is preserved in the cemetery of Vardenik village of Gegharkunik province of Armenia. According to the epitaph, Avtandil, the son of Avan, entered a boat with grass-woven slippers and drowned due to the storm of the sea (in this case: lake Sevan). Another epigraphic evidence is known from Jerusalem. An inscribed stone dated 1724 is placed on the northern wall of St. Gregory the Illuminator church built on the eastern part of the Holy Sepulchre temple. According to the content of the inscription, the ship

of pilgrims en route from Constantinople to Jerusalem had sank, as a result of which more than three hundred pilgrims (more than two hundred Armenians, more than a hundred Greeks, several Turkish sailors) were drowned. This terrible case is evidenced in the colophon of a contemporary manuscript, too (M 616/B), whose scribe Deacon Martiros Karbetsi miraculously survived from the same disaster.

Резюме

СТИХИЙНЫЕ БЕДСТВИЯ И НЕБЕСНЫЕ ЯВЛЕНИЯ В ЭПИГРАФИЧЕСКИХ НАДПИСЯХ

Часть 2. Затмение Солнца, морской шторм

Арсен Э. Арутюнян

Канд. ист. наук

Ключевые слова – эпитафическая надпись, затмение Солнца и Луны, Анания Ширакаци, обнесенный стеной хачкар (крест-камень) Коша, монастырь Аракелок, памятник «Цак хач» в Аштараке, морской шторм, кораблекрушения, утопления.

В армянских эпитафических надписях сохранились свидетельства о затмениях Солнца и морских штормах, в частности о кораблекрушениях, утоплениях и других подобных событиях. В космологической и изучающей летоисчисление литературе летописцы и исследователи часто обращались к такому явлению, как затмение Солнца и Луны. Оно нашло отражение также в мифологии и фольклоре. Эпитафические свидетельства об этом явлении сохранились на пьедестале обнесенного стеной хачкара (крест-камень) в Коше (возведен в 1195 г.), на тыльной стороне хачкара, расположенного недалеко от монастыря Аракелок (1267 г.), а также на памятнике «Цак хач» в Аштараке (1268 г.).

Что касается случаев кораблекрушений и утоплений вследствие морских штормов, то о них сохранились примечательные сведения не

только в летописных источниках, в частности рукописных памятных записях, но и в эпиграфических надписях. В этом ряду заслуживает внимания сохранившаяся на кладбище села Варденик Гегаркуникской области Республики Армения надгробная эпитафия 1141 г., согласно которой сын Авана Автандил в сплетенных из травы туфлях зашел на корабль и утонул в результате шторма на море (в данном случае – на озере Севан). Еще одно эпиграфическое свидетельство сохранилось в Иерусалиме. Согласно надписи 1724 г., которая высечена на северной стене церкви Св. Григория Просветителя, построенной в восточной части храма Св. Воскресения, корабль паломников, плывущих из Константинополя в Иерусалим, затонул, в результате чего утонули более трехсот паломников (более двухсот армян, более ста греков, несколько турецких моряков). Это ужасное происшествие засвидетельствовано также в одной близкой по времени к указанной выше надписи рукописной памятной записи, автор которой Мартирос саркаваг Карбеци чудом уцелел в этой катастрофе.

REFERENCES

“Divan hay vimagrut‘yan”, prak IV. Geghark‘unik‘. Kamoyi, Martunu yev Vardenisi shrjanner, kazmets‘ **Barkhudaryan S.**, Yer., 1973, prak VI. Ijevani shrjan, kazmets‘in` **Avagyan S.**, **Janp‘oladyan H.**, Yer., 1977, prak VII. Ukraina, Moldova, kazmets‘` **Grigoryan G.**, Yer., 1996, prak IX. Loṛu marz, kazmets‘in` **Barkhudaryan S.**, **Ghafadaryan K.**, **Saghumyan S.**, Yer., 2012 (**In Armenian**).

1. “Hayeren dzeragreri hishatakaranner. ZHĒ. dar”, hat. A (1601-1620 t‘t.), kazmets‘in` **Hakobyan V.**, **Hovhannisyan A.**, Yer., 1974, hat. B (1621-1640 t‘t.), kazmets‘in` **Hakobyan V.**, **Hovhannisyan A.**, Yer., 1978 (**In Armenian**).

2. “Manr zhamanakagrut‘yunner. XIII-XVIII dd.”, hat. I, kazmets‘` **Hakobyan V.**, Yer., 1951, hat. II, kazmets‘` **Hakobyan V.**, Yer., 1956 (**In Armenian**).

3. “Mayr ts‘uts‘ak dzeragrats‘ Srbot’s Yakobeants’”, hat. 8, kazmets‘` **Norayr ark‘. Pogharean**, Yerusaghēm, 1977 (**In Armenian**).

4. “Mayr ts‘uts‘ak hayerēn dzeragrats‘ Mashtots‘i anuan Matenadarani”, hat. G, kazmets‘` **Yeganean Ō.**, Yer., 2007, hat. Ē, khmbagrut‘eamb` **G. Tēr-Vardaneani**, Yer., 2012 (**In Armenian**).

5. “Mshak”, T‘iflis, 1882, 6 aprili, N 56, 1903, 25 hunvari, N 17 (**In Armenian**).

6. “Nor bargirk‘ haykazeen lezui”, yerkasirut‘iwn yerits‘ vardapetats‘ yashakertut‘enē metsin Mkhit‘aray abbahōr **h. G. Awetik‘ean**, **h. Kh. Siwrmelean**, **h. M. Awgerean**, hat. A-B, Venetik, 1836 (**In Armenian**).

7. “Nor dar”, T‘iflis, 1898, 12 marti, N 44 (**In Armenian**).

8. “S. Ējmiatsni gradaran” (anstoragir), “Ararat”, S. Ējmiatsin, 1888, N A, ėj 23-35 (**In Armenian**).
9. “Solnechnyje zatmenija I ix nabljudenija”, sostavili: **Bronshten V., Bugoslavskaja Je., Bugoslavskaja N. I dr.**, pod redakciej **A. Mixajlova, M.**, 1960 (**In Russian**).
10. “Ts’uts’ak Mayr At’or S. Ējmiatsni nor stats’vats dzeragreri”, kazmets’ **Ter-Mik’ayelyan N.**, “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 1965, N ZH, ėj 59-63 (**In Armenian**).
11. **Abrahamyan A.**, Anania Shirakats’u matenagrut’yunĕ, Yer., 1944 (**In Armenian**).
12. **Aghawnuni Mkrtich’ yeps.**, Miabank’ yew ays’teluk’ hay Yerusaghĕmi, Yerusaghĕm, 1929 (**In Armenian**).
13. **Alek’sanyan T.**, Tavush amrots’i 2021 t’. hnagitakan peghumneri ardyunk’nerĕ, hashvetvut’yun’ nerkayats’vats HH GAA Hnagitut’yan yev azgagrut’yan institutum 2021 t’. hnagitakan ashkhatank’neri ardyunk’nerin nvirvats nstashrjanin (**In Armenian**).
14. **Anania Shirakats’i**, Tiezeragitut’iwn yew tomar, ashkhatut’eamb` **A. Abrahamyani**, Yer., 1940 (**In Armenian**).
15. **Avagyan S.**, Vimagrakan prptumner, Yer., 1986 (**In Armenian**).
16. **Avagyan S.**, Vimakan ardzanagrut’yunneri barak’nnut’yun, Yer., 1978 (**In Armenian**).
17. **Ayvazyan K’.**, Meghk’i masin patkerats’umnerĕ haykakan hek’iat’nerum, “Hay zhoghovrdakan mshakuyt’ XVI: Avandakanĕ yev ardiakanĕ hayots’ mshakuyt’um. Derenik Vardumyani tsndyan 90-amyakin nvirvats gitazhoghovi nyut’eri zhoghovatsu”, khmb.` **Harut’yunyan S., Marut’yan H.** yev aylk’, Yer., 2014, ėj 417-425 (**In Armenian**).
18. **Badalyan H.**, Ėrats’uyts’i patmut’yun, Yer., 1970 (**In Armenian**).
19. **Bozoyan A.**, Hay-byuzandakan yekeghets’akan banakts’ut’yunneri vaveragr (1165-1178 tt’.), Yer., 1995 (**In Armenian**).
20. **Eliade M.**, Mif o vechnom vozvrash’enii. Arxetipy I povtorjaemost’, SPb., 1998 (**In Russian**).
21. **Ēynat’yan J.**, Tiezeragitut’yan yew tomari meknut’yunner (Ē-ZHYE. darer), usumnasirut’yun yev bnagr, Yer., 2015 (**In Armenian**).
22. **Ghanalanyan A.**, Ařatsani, Yer., 1960 (**In Armenian**).
23. **Ghanalanyan A.**, Avandapatum, Yer., 1969 (**In Armenian**).
24. **Grigoryan A.**, Artakarg iravichaknerĕ yev chgnazhamayin karavarman mijots’ařumnerĕ mijin darerum, “Chgnazhamayin karavarum yev tekhnologianer” gitakan yev gitamet’odakan hodvatsneri zhoghovatsu, N 13, Yer., 2018, ėj 238-244 (**In Armenian**).
25. **Hakobyan V.**, Davit’ K’obayrets’u hishatakaranĕ, “Teghekgagir” has. git., Yer., 1952, N 8, ėj 113-120 (**In Armenian**).
26. **Harut’yunyan A.**, Tarerayin aghetnern u yerknayin yerevuyt’nerĕ vimagrerum: Mas ařajin: Yerkrasharzh, “Vĕm” hamahaykakan handes, Yer., 2022, N 1, ėj 178-196 (**In Armenian**).
27. **Harut’yunyan Kh.**, Hayeren dzeragreri hishatakaranerĕ, Yer., 2019 (**In Armenian**).
28. **Harut’yunyan S.**, Hay ařaspelabanut’yun, Beirut’, 2000 (**In Armenian**).
29. **Hovsep’yan G.**, Havuts’ t’aři Amenap’rkich’ĕ yev nuynanun hushardzanner hay arvesti mej, “Nyut’er yev usumnasirut’yunner hay arvesti patmut’yan”, hat. B, Yer., 1987, ėj 5-107 (**In Armenian**).
30. **Karapetyan S.**, Hay mshakuyt’i hushardzannerĕ Khorhrdayin Adrbejanin brnakts’vats shrjannerum, Yer., 1999 (**In Armenian**).
31. **Khach’ikyan L.**, Yaghags taremtin I Vanakan vardapetĕ asats’eal, “Matenadarani gitakan nyut’eri zhoghovatsu”, hat. 1, Yer., 1941, ėj 151-169 (**In Armenian**).
32. **Khalp’akhch’yan H.**, Mjnadaryan Hayastani navahangistnern u navakayannerĕ, “Ējmiatsin”, S. Ējmiatsin, 1963, N B, ėj 37-44 (**In Armenian**).

33. **Lisits'yan St.**, Zangezuri hayerē, Yer., 1969 (**In Armenian**).
34. **Malkhaseants' St.**, Hayerēn bats'atrankan baṙaran, hat. yerkrord, Yer., 1944 (**In Armenian**).
35. **Margaryan H.**, Hyusisayin Hayastani yev Vrastani ZHB dari patmut'yan mi k'ani harts'er, Yer., 1980 (**In Armenian**).
36. **Minasyan T'.**, Arak'el vardapetē yev Deghdzuti grch'ut'yan kentronē, "Banber Matenadaranı", Yer., 2020, N 29, ēj 298-308 (**In Armenian**).
37. **Movsēs Khorenats'i**, Hayots' patmut'iwn, aṙajabanē` **P. Muradeani** yew **K. Iwzbasheani**, k'nnakan bnagirē` **M. Abegheani** yew **S. Yarut'iwneni**, "Matenagir' Hayots'", hat. B, Ant'iliyas-Libanan, 2003 (**In Armenian**).
38. **Muradeants' Y.**, Hamshēnts'i hayer. Yerknk'i lusatuner yew bnut'ean yerewoyt'ner, "Azgagrakan handēs", girk' VI, T'iflis, 1900, ēj 111-115 (**In Armenian**).
39. **Muradyan P.**, Hayastani vrats'eren ardzanagrut'yunnerē. aghbyuragitakan k'nnut'yun, Yer., 1977 (**In Armenian**).
40. **Nalbandyan A., Simonyan A.**, Norahayt patarikner Meghrii S. Hovhannes yekeghets'u peghunnerits', "Banber Matenadaranı", Yer., 2020, N 29, ēj 198-206 (**In Armenian**).
41. **Nalbandyan St., Nalbandyan A., Badalyan H., Alek'sanyan T.**, Tandzap'arakhi anapati 2012-2019 t't'. peghunneri ardyunk'nerē, "Hushardzan" taregirk', hat. ZHZ, Yer., 2021, ēj 85-119 (**In Armenian**).
42. **Nersēs Shnorhali**, Ĕndhanrakan t'ught'k', Yerusaghēm, 1871 (**In Armenian**).
43. **Petoyan V.**, Sasna azgagrut'yunē, Yer., 1965 (**In Armenian**).
44. **Petrosyan H.**, Khach'k'ar. tsagumē, gortsaruyt'ē, patkeragrut'yunē, imastabanut'yunē, Yer., 2008 (**In Armenian**).
45. **Petrosyan L.**, Hay zhoghovrdakan p'okhadramijots'ner. A. Hetiotn yev grastayin p'okhadramijots'ner (patma-azgagrakan usumnasirut'yun), "Hay azgagrut'yun yev banahyusut'yun", hat. 6, pat. khmb. **Vardumyan D.**, Yer., 1974, ēj 91-156 + agh. I-XXXI (**In Armenian**).
46. **Pōghosean N.**, Grigor Shght'ayakir Patriark', Yerusaghēm, 2017 (**In Armenian**).
47. **Saghumyan S.**, Ashtarak. patmakan ants'k'er, hushardzanner, vimagir ardzanagrut'yunner, Yer., 1998 (**In Armenian**).
48. **Sawalaneants' T.**, Patmut'iwn Yerusaghēmi, grabar bnagirēn ashkharhabari veratsets'` **Mesrop yeps. Nshanean**, hat. B, Yerusaghēm, 1931 (**In Armenian**).
49. **Shahinyan A.**, Hayastani mijnadaryan kot'oghayin hushardzannerē. IX-XIII dareri khach'k'arerē, Yer., 1984 (**In Armenian**).
50. **Shahinyan A.**, Koshi kot'oghē yev nra ardzanagrut'yunē, "Patmabanasirakan handes", Yer., 1968, N 2, ēj 197-202 (**In Armenian**).
51. **St'oun M., Harut'yunyan Kh.**, Yerusaghemi Surb Harut'yan tachari hayeren ardzanagrut'yunnerē: Mas yerrord: Surb Grigor Lusavorich' yekeghets'in (S. Heghinei yekeghets'i), "Vēm" hamahaykakan handes, Yer., 2020, N 4, ēj 179-205 (**In Armenian**).
52. **T'umanyan L.**, Vana lchi kghzineri vank'eri grch'ut'yan kentronnerē, Yer., 2019 (**In Armenian**).
53. **Yovhannēs Tarawnets'i Kozerņ**, Patmut'iwn nshanats', vor yeghen I gushaks aṙajika awurts'n, vor katarets'aw, asats'eal surb vardapetin Yohannisı Kozṙan` hayots' vardapeti, k'nnakan bnagirē yev aṙajabanē` **Y. K'ēosēeani**, "Matenagir' Hayots'", hat. ZHZ, Yer., 2012, ēj 79-82 (**In Armenian**).

54. **Yovhannēs Yerznkats‘i**, *Matenagrut‘iwn*, hat. A., *Charēr yew k‘arozner*, bnagrērē hratarakut‘ean patrastets‘in` **A. Yerznkats‘i Ter-Srapyanē yev Ē. Baghdasaryanē**, neratsakannerē` **Ē. Baghdasaryani**, Yer., 2013 (**In Armenian**).

55. **Zak‘aria kat‘oghikos Dzagets‘i**, *Charḳ‘*, ashkhatasirut‘eamb` **H. Pōghos vrd. Ananeani**, Venetik, 1995 (**In Armenian**).